

ԿԱՐԾԻՔ

Միլվա Մուրադյանի «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը» թեկնածուականատենախոսության

Հայերենագիտության զարգացման ներկա փուլում որոշակի ուշադրության են արժանանում շարահյուսության արդի խնդիրները՝ նկատի ունենալով վերջիններիս ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակությունը: Այդուհանդերձ, գիտականորեն շրջանառվող տեսական նյութի քննությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման տարբեր փուլերում բայի արժույթի ընդգրկման սահմաններին, արժույթային միավորների ընտրության սկզբունքներին վերաբերող բազմաթիվ հարցեր հստակեցման և համակարգված քննության կարիք ունեն: Արժույթի հետազոտությունը նշանակում է ոչ միայն դիմավոր բայի կապակցելիության հնարավորությանը, այլև դիմավոր բայով նախադասություն կազմող շարահյուսական միավորների արտահայտության որոշակի դրսևորումներին, դասանշային պատկանելությանը և դրանց կապակցման եղանակներին վերաբերող խնդիրների համակարգված հետազոտություն:

Ուսումնասիրվող նյութը ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթի քննության առաջին փորձը չէ, անշուշտ: Ինչպես նշում է հեղինակը. «Սույն աշխատանքը ժամանակակից հայերենի անցողական բայերի արժույթը համակարգորեն բնութագրելու փորձ է» (Մեղմ., էջ 4): Այդուհանդերձ, «նկատի ունենալով բայերի կապակցելիության բազմազանությունը և քերականագիտության մեջ հարցի ոչ լիարժեք մշակվածությունը»՝ ատենախոսը խնդրին անդրադարձել է՝ «ներառելով իմաստաբանական և քերականական մակարդակները՝ արդեն նոր դիտանկյունից» (Մեղմ., էջ 4):

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, վեց գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության և համառոտագրություններից ցանկերից: Ընդհանուր ծավալը 132 համակարգչային էջ է:

Ներածությունն անդրադարձ է հարցի պատմությանը: Այնուհետև տրվում է հայերենի բայի արժույթի բնութագիրը. հիմնական քննությունը սկսվում է երկրորդ գլխից: Ատենախոսը ներկայացնում է արժույթի հինգ դրսևորում՝ ենթակաառություն, կոչականառություն, ստորագառություն, խնդրառություն, պարագաառություն: Միանգամայն ճիշտ է նկատում Ս. Մուրադյանը, որ արժույթի առաջին երեք դրսևորումները (ենթակաառություն, կոչականառություն, ստորագառություն) կարելի է քննել նախադասության մակարդակում, իսկ մյուս երկուսը (խնդրառություն, պարագաառություն) ինչպես նախադասության, այնպես էլ բառակապակցության մակարդակներում: Հիմնավորումը մեկն է՝ խնդիրներն ու պարագաները կարող են հանդես գալ ոչ միայն նախադասության, այնպես էլ բառակապակցության կազմում, մինչդեռ բայի ենթակաառությունը, կոչականառությունը, ստորագառությունը

դրսևորվում են միայն նախադասության մեջ դիմավոր բայի առկայությամբ: Անդրադառնալով կոչականառությանը՝ ատենախոսն ընդգծում է հատկապես Գ. Խաչատրյանի ներդրումը այս ոլորտում: Նշենք, որ իբրև բայի կապակցելիության դրսևորում՝ կոչականառությունը առաջին անգամ ուսումնասիրվել է «Գրաբարի վերլուծական բայերի արժույթը» գրքում, և **կոչականառություն** տերմինն էլ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել հեղինակը¹: Քանի որ կոչականառությունը անիջականորեն առնչվում է գոյականի դասանշային հատկությանը, ուստի ատենախոսը ճիշտ է կողմնորոշվել՝ փորձելով հստակեցնել, թե գոյականի դասանշային որ խմբերին են առնչվում կոչականառության արժույթով օժտված բայերը:

Որպես առաջարկություն.- Կարծում ենք՝ կարելի էր այս ատենախոսության միջոցով առաջին անգամ գիտական հիմնավորումով շրջանառության մեջ դնել նաև մեկ այլ տերմին՝ «ակտանտ»-ի հայերեն տարբերակը: Որպես գիտաբան՝ «ակտանտ»-ը գործածվում է նաև թատերարվեստում, և Հ. Հովհաննիսյանը իր հետազոտություններում հաճախ կիրառում է հայերեն տարբերակը՝ «իրադրություն»²: Մանավանդ լեզվաբանական գրականության մեջ ևս տերմինը հայացնելու միտումներ կան՝ «գործողության մասնակից», «գործորդ», իսկ գրականագիտության մեջ՝ «կերպար»:

Անշուշտ, շատ գնահատելի է, որ ատենախոսը իր աշխատանքն առավել ամբողջացնելու նպատակով միջազգային ծրագրով գործուղվել է Իսպանիայի Գրանադա համալսարան, որտեղ կատարել է հայերենի և անգլերենի բայերի արժույթի զուգադրական ուսումնասիրություն: Պետք է նշել, սակայն, որ արևելահայերենի անցողական բայերի արժույթի քննությունը ամենևին չի ենթադրում անգլերենի բայի ընդգրկման անհրաժեշտություն, մանավանդ որ ատենախոսության մեջ տիպաբանական առանձնահատկությունների փոխկապակցական հարաբերության վերլուծություն չկա: Կան, իհարկե, որոշ դիտարկումներ, որոնք ընդգծում են տարբեր լեզուներում բայի արժույթի դրսևորման առանձնահատկությունները, սակայն դրանք ատենախոսության մեջ որոշիչ չեն: Ճիշտ կլիներ, թերևս, եթե աշխատանքը զուգադրական քննություն լիներ: Այս դեպքում արդեն շատ ավելի հստակ ու տեսանելի կլինեին հայերենի և անգլերենի բայերի արժույթների և՛ ընդհանրությունները, և՛ տարբերությունները, նամանավանդ որ նման ուսումնասիրություն դեռևս չի իրականացվել:

Ատենախոսը նշում է, որ քննվող փաստական նյութը քաղել է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից»՝ մոտ 6000 անցողական բայ: Կարծում ենք՝ կարելի էր քննվող բայերը համապատասխան արժույթներով ներկայացնել որպես հավելված՝ առավել տեսանելի դարձնելով դրանց կապակցելիությունը: Հետագայում

¹ Գ. Խաչատրյան, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Ե., 2000, էջ 26-28:

² Հ. Հովհաննիսյան, Դանիել Վարուժանի «Հարձը» պոեմի հերոսուհու ենթադրելի նախատիպը, Պատմաբանասիրական հանդես, N 1, Ե., 2020, էջ 83:

էլ հավելվածը կարող է հիմք դառնալ հայերենի արժույթի բառարանի կազմության համար:

Անցողական բայերի արժույթը հետազոտելիս ատենախոսն անդրադառնում է հարցի քննությամբ զբաղվող հեղինակների կարծիքներին, որոնք շարադրելիս նշում է դրանց և՛ ընդհանրությունները, և՛ տարբերումները: Վերջիններիս վերաբերյալ բացատրություններում փորձում է ներկայացնել նաև իր մոտեցումը, սակայն երբեմն մեկնաբանությունն այնքան էլ ճիշտ չի լինում: Օրինակ՝ բայիմաստով պայմանավորված արժույթի փոփոխությունը քննելիս ատենախոսն նշում է Է. Աղայանի դիտարկումներիցը մեկը՝ գրելով. «Է. Աղայանը հայերենի բառապաշարի մեծագույն մասի բազմիմաստությունը բացատրում է մի կողմից՝ բառիմաստի զարգացման ընդհանուր օրինաչափություններով, մյուս կողմից՝ հայերենի պատմությամբ» (Ատեն., էջ 79): Մինչդեռ «Լեզվաբանության հիմունքներ» աշխատության մեջ Է. Աղայանը գրում է հետևյալը. «Ծանոթանալով մեր լեզվի բառապաշարին՝ տեսնում ենք, որ բառերի մեծագույն մասը բազմիմաստ բառեր են, և մենիմաստ բառերը շատ փոքր քանակություն են կազմում: Դա բացատրվում է, մի կողմից, բառիմաստի զարգացման ընդհանուր ընդհանուր օրինաչափություններով, մյուս կողմից՝ հայերենի պատմությամբ»³:

Անհրաժեշտ է նշել, որ ատենախոսության մեջ կան նաև այլ բնույթի ոչ ճիշտ ձևակերպումներ: Օրինակ՝ անդրադառնալով անցողական բայերի պարագաառությանը՝ ատենախոսը գրում է. «...բայի կողմից բացված տեղերը կարող են լրացվել ոչ միայն առարկայով, հաճախ՝ նաև հանգամանքներով» (Ատեն., էջ 111): Կամ՝ «...բայերը իրենց ներսի խնդրին զուգահեռ առնում են ևս երկու խնդիր լրացում, ուստի և բայը իր արժույթայնությունը չի ծավալում» (Ատեն., էջ 75):

Անհամապատասխանություն կա ատենախոսության եզրակացությունների 17-րդ կետում. «Հայ գեղարվեստական և հրապարակախոսական լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրական արևելահայերենի անցողական բայերի արժույթը հատկապես դրսևորվում է բայ-խնդիր կապակցություններով...» (Ատեն., էջ 123): Մի՞թե ատենախոսությունը ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթի քննությունն չէ: Այս պրագայում ինչու՞ է եզրակացության մեջ նշվում հայ գեղարվեստական և հրապարակախոսական լեզվի ուսումնասիրությունը:

Եվ մի դիտարկում ևս: Ներգործական սեռի բայերի պարագաառությունը քննելիս ատենախոսն առանձնացնում է տրական և բացառական հոլովներով արտահայտված տեղի պարագաներ, որոնք, ըստ էության, հանգման և անջատման անուղղակի խնդիրներ են՝ «հենեց պատին» (ինչի՞ն), «պոկեց ճյուղից», «քաղեցի թփից» (ինչի՞ց) (Ատեն., էջ 113):

Կան նաև համակարգչային շարվածքի վրիպակներ, մասնակի անհարթություններ, բառերի ոչ ճիշտ գործածության դեպքեր (իմաստային-

³ Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 335:

իմաստաբանական, մեքենայական-մեքենական) (Ատեն□, էջ 15, 50, 55, 59,70,71,75,77, էջ 81):

Եզրակացությունները բխում են քննության արդյունքներից:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ դիտողությունները մասնակի բնույթ են կրում, վերաբերում են լեզվական առանձին իրողությունների: Դրանց կարելի է անդրադառնալ աշխատանքը հրատարակության պատրաստելիս:

Միլվա Մուրադյանի «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը» թեկնածուական ատենախոսությունը արժեքավոր է: Հեղինակը ոչ միայն համակարգված ներկայացրել է ժամանակակից հայերենի անցողական բայերի արժույթի ընդհանուր պատկերը, այլև բացահայտել է առկա օրինաչափությունները:

Աշխատանքի հիմնական բովանդակությունն արտացոլված է սեղմագրում:

Ատենախոսության թեմայով հարատարակված է ինը հոդված, որոնք ևս համապատասխանում են բովանդակությանը:

Այս ամենը հնարավորություն է ընձեռում միջնորդելու, որ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող 019 մասնագիտական խորհուրդը Միլվա Մուրադյանին շնորհի իր հայցած քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Բ.գ.թ., դոցենտ

16.09.2021թ.



Գ. Մ. Մխիթարյան

Բ.գ.թ. Գ.Մխիթարյանի ստորագրությունը հաստատում եմ:

Լեզվի ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն

Ն. Գ. Հովհաննիսյան